



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԻՐ ԷԶԵՐ (Եղիվարդ, Երուսաղեմ, 1973)

Երուսաղեմի պատրիարք Եղիշև արքեպու. Տերտերյանի վերջերս հրատարակած գիրքը թերթակի բանաստեղծական ստեղծագործության ընթանուր վաստակից ընտրաբար բաղված քերթվածների ժողովածուն է: Մրրազան պատրիարքը ժամանակակից սիրութքահայ գրականության մեջ հանրածանոյ բանաստեղծ Եղիվարդն է և պատկանում է այն ընորյալների թվին, որոնք իրենց տաղանդով ու արգասավոր գրչով արձանի և ուրուն տեղ են գրավում վերջին երեսամյակի հայ հոգուր կյանքի ստեղծագործական անդաստանում: Այսօր նրա զուտ բանաստեղծական երկերը, բացի արձակ գործերից, մոտ մի կես տասնյակի են հասնում, որոնք վկայում են բանաստեղծի անկեղծ ու անվերապահ մերն ու նվիրումը քերթողական արվեստին:

Ի՞նչն է եղել, աղդարև, հոգեբանական շարժադիր սույն գեղեցիկ հաստորում բանաստեղծությունների այս վերաբրատարակության: Մրրազան կրակի մոտալուս հաճաման մտավախությունն, թե՛ ստեղծագործական կյանքի մի նոր շրջանի վերահայտնությունն:

Բայց բանաստեղծն ինքը հավաստիացնում է մեզ.

—Կեցիսի հոգիս հուշերով ջերմիկ,
Արևով անցյալ,
Կվերադառնան, խաղաղ, համբարազլ,
Սերերս անանուն և անմիտար,
Որոնց շունչին տակ
Երգերս ծաղկեցան հասակ առ հասակ,
Հոգիս՝ հարսնարան հին ծանոթներուն:
Եղիվարդը սույն հաստորով վերադառնում

է իր անցյալի հիշատակներին: Բայց դրանք դեպքեր ու դրվագներ չեն այնքան, որքան հոգեկան հույզեր ու ապրումներ, որոնք մեզ գալիս են բանաստեղծի ներքին ապրումների ու զգայնությունների ճանապարհով:

Հին բանաստեղծություններից կազմված այս նոր հաստորի սկզբում զետեղված բանաստեղծությունը, որ մի տեսակ անողջակի պատասխան է մեր հարցադրումներին ու տարակուսանքներին, մեղինակը վերնագրել է «Վերաբաց»: Նշանակում է՝ նա վերաբացի, վերածաղկման ցնծություններն է ապրում կյանքի այն հանգրվանում, որը ուրիշներ իրենց հաշիվները փակած են համարում: Այս առումով հաստորը թեպետն գալիս է անցյալից, բայց շեշտո՞ւմ է ներկան: Եվ բանաստեղծը անցյալն ապրում է ներկայի մեջ:

—Սակայն, ո՞վ հրաշք,
Զեռք մը անձանոթ խորն իմ հոգին,
Կվառե նորեն կանչեղներ հազար,
Իրարու կոգաև անցյալն ու ներկան,
Ինձի կթվի թե պարմանն եմ այն,
Ուժեղ ու կայտա,
Որ տենչանքներու դրումնեն ոսկեսար,
Այն հին օրերուն կմտներ աշխարհ:

Այսօր ավելի քան երեսուն տարիների մի անջրական է բաժանում մեզ այն օրերից, երբ Եղիվարդը իր բանաստեղծությունների անդրանիկ գրքով («Մագդաղինեն մեղրամունե») գրական հրապարակ էր իշնում: Նա չէր գալիս, հարկավ, որպես մի նոր ու անձանոթ անուն, այլ որպես կազմավորված ու հասունացած մի բանաստեղծ, որն արդեն որոշ համբարքի էր հասել «Սիոն» ամսագրի

ու նայ մասովի էջերու նրատարակիած իր բանաստեղծություններու: Նշանակալից և սակայն, որ այս նոր ու ինքնառախիպ բանաստեղծի մուտքը տեղի ունեցավ առանց ձայնի

ԸՆՏԻՐ ԷՇԵՐ

Հայուս

ու ցուցի, բայց ինքնավատահ ու վճռական, նման այն բուրմի մուտքին, որն արդեն նըլվածել է տաճար մտնելու և աստվածներին խնկարիկելու իրավունքները: Դժբախտաբար այն ժամանակ լրագրական մի քանի ընթացիկ գրախտականներ միայն լույս տեսան, որոնց մեջ նոյնակ հանգամանավոր ստորագրություններ քաղաքավարական հյուրընկալությամբ դիմավորեցին այս մեծ բանաստեղծի մուտքը: Հրապարակի գրական մասնիկ չկարդացավ ըստ արժանակուն գրաղեկի ու համապատասխան գնահատանքի արժանացնել հրան: Այս տեսակիսից իրավացի էր Օշականը, երբ Եղիկարոյի երկրորդ հաստիքը («Խորութակման գիշերներ») սկզբում գրած իր հակիրճ առաջարկանի մեջ նշում էր. «Ըսին կարգ մը բաներ առաջին հաստորիդ շուրջ, մեծ մասով հեռու և օտար բաներ: Մի՛ ցավիր: Կարգ մը մարդոց գիրն է ասիկա—գիտիվայր հասկցվիլ»:

Եվ իսկապես: Այս տարաշխարհիկ բանաստեղծը իր հյուտերի հախասիրություններով ու արվեստի յորահատկությամբ, ձևի ու բովանդակության գերազանց ինքնատի-

պուրաբամբ դորս էր գալիս ժամանակաշրջանին ճաշակի ու բրունողության սահմաններից: Գալդականի հոգեբանությունը և մեր պատմական ճակատագրի հանգամանքները բունացել էին արվեստի մեր ընթացությունների վրա, և ազգային մոտահոգությունների վրա կենացրուածված ձգությունը գրավել էին մեր ամրողապես: Մյուս կողմից, թերեխանական արվեստի համարած ու ծանրածանր տիրապետությունը, Օշականով թեարկված, բանաստեղծության գեր կատարողական ձևի պահպերծ մի գահակալություն էր հաստատել նոր կրաքի կենդանի արտահայտությունների վրա: Ամեն մի երիտասարդ, որ գրիշ էր վերցնում, թերեխանական վաշտին իր անդամակցությունն էր ստորագրում անվերեաւ: Մոտացվել էր անգամ Վարդմանի պես մեծ ու բարձրայտիշ մի բանաստեղծ, որի արվեստի ուրությունը հոգիների վրա քիչ տարածություններ էին ընդգրկում: Մեծարենցի պես մի չքնաղ երիտասարդի լուսավոր արվեստի կախարդանքը քշերի ստեղծագործություններում իր արտահայտությունն էր զտնում: Մեկ խորոպ՝ իշխում էր թերեխանը, ոչ անշուշտ անարժանարար, բայց միաժանձան, ողի հմայքին սփյուռքի բանաստեղծների այս անձնատվությունը գինն էր կարծես մեր հոգեկան չքավորության: Ահա թե ինչո՞ւ թերեխանի շնչով պարուրված մթնոլորտին մեր գգայարանների ընտելացումը, որ բնականորեն կազմելու էր նաև մեր գրական նկանագիրը, դյուրավ պիտի չկարդանար հայորդվել տարակերպ գգայնությունների հետ:

Եղիկարոյը բերում էր իր նոր ձայնն ու շեշտը, նոր գույներն ու երանգները, նոր գըծերն ու պատկերները, իր նոր տեսիլներն ու երազները: Նա հայտնվում էր որպես խորապես բանաստեղծական ինքնատիպ գգայություն:

Ի՞նչ են Եղիկարոյի երգած հյութերը: Այսինքն ի՞նչ է ընթերցողին իր «ունեցած ըսպիրը»:

Ավետարանը: Կյանքը: Մարդը: Անցյալը: Մանկության հիշատակները: Հայրենիքը: Հայենիքը: Հայենի գյուղը, բնությունը: Մեկ խորոպ այն ամենը, ինչ մարդու ներքին աշխարհի խոռվաններն ու տագնապներն է կազմում:

Ավետարանը, իհարկե, ոչ միայն կրոնական կենդանի կրաքի ու հավերժական ճշշմարտությունների հոգեզմայլ մի մատյան, այլև ինքնին բարձրագույն արվեստի մի չքնաղ գիրը, մշտական ներշնչումների շտեմարան և բանաստեղծի համար: Քարոզիչ քահանան մեզ մատուցում է այն որպես կենդանի կրաքի կանոնների գիրք: Աստվածաբան գիտնականը մեկնաբանում ու

հաստատում է այն, իսկ արթևաստագիտ բանաստեղծը՝ վերստեղծում: Ո՞չ թե ավելացնում կամ պակասեցնում է, ինչ որ անհնարին, այլ իր մտահղացումներն անդրադարձնում է նրա սրբամակից: «Նշանակալից է, որ Եղիքարդը Ավետարանին չի դիմում առ ի պաշտոնե: Ընդհակառակը, եթե ուզում եք, նա հնամախ մի կողմէ է թողնում եկեղեցական սրեմի հարկեցուից պայմանադրականությունները, որպեսզի կարողանա ավելի մոտիկից, ավելի ազատ ու անկաշկան զգալ ու ապրել մարդուն ու բացահայտել նրա ներքին բարդ ու հակասական վիճակները: Այս տեսակետից բանաստեղծն Ավետարանում է գտնում կյանքի տագնապների ու հոգու տառապահքների բացատրությունները: Բանաստեղծը «Մեղքի շուշաններ» է անվանել ավետարանական հյուրերի հերոսություններին: Խորապես խոսուն մի վերնագիր, որ թեկադրում է անմեղ մեղավորների կամ մեղավոր անմեղների հավիտենական գոյությունը: Վարուժանի մոտ «Խարված կույսեր» են նրանք «Գողգոթայի ծաղիկներ» ընդհանուր խորագրի տակ, մեղքի ու մեղանչումի աղետահար տառապայալներ, որոնք սակայն այնքան մեղավոր չեն, որքան իրենց դատապահությունը մարդիկ ու օրենքները: Նրանք պարզապես անմեղ զուերն են իրենց դատան դամբանների, որ բուն մեղավորներն են: Ինչքան էլ նրանք թաթախված են մեղքի տիղմի մեջ, պատմաներք, շուշանների հման մաքոր են ու գեղեցիկ, որովհետև նրանց մեղանչումները իրենցից չեն բխում ու իրենց ներքին մղումի արգասիքը չեն: Եթե սիրուր չի բաժանում ձեռքի կատարած չար գործը, և եթե մարդու գործած հանցավոր արարքներին նրա ներքին բարոյականությունը մասնակցություն չունի, ապա նա անմեղ է ու արդար: Եկ երք մարդու գիտակցում է իր մեղքը, այդ իսկ բոյկի համար դա դատարում է մեղավոր լինելուց: Ահա Մագդաղինեն, Սամարուհին, Սալոմեն և որիշներ: Բանաստեղծը բաց է անում ավետարանական դրվագների ծալքերը և նրանց յուրաքանչյուրից ներս իր հզոր երևակայությամբ ցոյց է տալիս մեղքի ու անմեղության, հանցանքի ու զիշման, երկրի ու երկրների ընդմեջ փոխանիփոխ ձգվող ու քաշքրշկող մարդկային հոգու եղերական դրաման:

Ամեն մի բանաստեղծություն պատվում է քրիստոնեական մի հիմնավոր գաղափարի ու գլխավոր մի բարոյականության շուրջ: Նրա գործողություններն ընթանում են հոգու երկու հակադիր եղբերի՝ աստվածային ոլորտների ու մարդկային սահմանների իրերամերժ բախումներով: Առաջինի տակավ տիրապետումով երկրորդի դիրքերի վրա պայմանակիրկում է այն լուսավոր ձգ-

տումը, որ մարդու ագատագրությունն է ինքնիրենից ու աշխարհից: Որո՞նք են, սակայն, այն ներգործուն ազդակները, որ մարդուն վերադարձնում են աստվածային էակի իր կոչմանը: Սիրո, գութի, ներման, կարեկցանքի, բարության ու քաղցրության բոլոր այն տենաշանքները, որոնք ժամանակաշըրջանի բոլոր ու անգույթ աշխարհի ճիրաններում տառապող մարդու կարուտներն են եղել:

— Զեզմէ անմեղու էն առաջ
Նետու թող քարն այս կնոշ:

Դատապարտության բոլոր օրենքների վրա՝ ահա գերագույն դատաստանը: Մարդու բերվում է իր սեփական հոգու պատկերի առջև, ինչպես հայելու դիմաց, այնուղիւ տեսնելու իր բովանդակ մեղավորությունը, ուստի և դատելու ու դատապարտելու իր իշխանության անիրավասությունը: Դա մեծագույն վճի՛ռն է, պատգամը, խի՛նը զգացնենող ու սի՛րուն իր անզգայության թմրիրից սրահինցնող ձայնը: Նախ քննի՛ր անձն, հետո դատի՛ր որիշին: Նախ տե՛ս քո աշքի գերանը, հետո որիշի աշքի շյուղը: Չէ՞ որ նոյնքան և ավելի դու ինքդ ենթակա եւ դատապարտության: Ահա՝ արդարության չափանիշն ու մեղադրական օրենսդրությունը: Ահա՝ օրենքի ու օրինաց գրքերը տոմարագիտական մատյանների վերածող մարդկային խղճի ու սրտի մինչև թարուն խորքերն ու խորշերը թափանցող ամեն նայվածքը, որ ցեցում է իրենց մեղքներին ճարակ դարձած ամբոխների ամբոխների կրծերն ու սահմահարում նրանց տարերային կատաղությունը:

Քարերն հատ հատ ինկան վար:

Ի՞նչ է, սակայն, այս օրենքի տակ գործող սկզբունքը, որից գործունեության ոգի ու ներշնչում է ստանու համոզումը:

Մարդն ավելի է մեղքեն...

Եկ ի՞նչ է մնում այնուեւու անել այն մեղավոր կնոշը, որ մի կարճ խոսքով, մի բարերականություն մահից դեպի կյանք է վերադարձնում: Կինը ոչինչ չունի փոխհատուցելու այն գերագույն շնորհը, որ կյանք է պարզում իրեն: Մնում է նրան միայն մեկ բան.

— Գնա՛, ալ մի՛ մեղանչեր...

Այս անհամենթաց ու անօրինակ ներումի ու գթապարտության առջև, որոնց մասին նա երևակայել իսկ շեր կարող, մի հանկարծական բեկում է առաջանում նրա մեջ, հզոր թոփքով մի անշատում իր էությունից՝ մի նոր էության ի խնդիր, ու ծնկի գալով հերարձակ ու լազահառաչ՝ դիմում է Վարդապետին:

—Սերեն անցած կրթիս
Դուն՝ ներումի Վարդապետ,
Քեզ փառքեցի օրերով,
Ծամբաւերուն մեջ տրտում.
Երազեցի ես քեզի,
Երը արևը կրամար
Ժապավենն իր ուսկեգույն
Լրճին վրա Գաղիլին:
Երք հասկերը հազարով
Կօրորվեին զեփուտեն,
Եվ ձիթենին կիւսար
Գորշ հեշտությունն իր սրտին:
Քեզ փառքեցի օրերով
Ուկենեղուն հարկերու
Սրահներուն մեջ փարթամ,
Երք գարշանքեն մարդերու
Հաղածական, խենթացած,
Կորոնեի ապաստան
Սիրու մը ներման ընդունակ.
Դուն չկայի՞ ո, չկայի՞ ո:

Մեղքերի թռողության տակ սրբված ու
մաքրված է կինը, և նրա սիրու գարնանա-
յին առավոտյան արևին բացվող ծաղկն
բաժակի պես ցնծապատար՝ խայտում է այդ
գիտակցությունից:

—Ներումն ուկին է որով
Փրկությունը կգնիլի.

Արցունքի շիթ մը միայն,
Բավ է փշրել քար առ քար,
Մեղքի լուները տիտան:

Կասկածելու հարկ չկա բոլորովին: Նե-
րումն այս աստվածային ուժի մասին շուտով
մեզ համոզելու է գալիս «Սալուն»:

Հիսուսի կերպարի մոտ ամա Հովհաննես
Մկրտչ՝ Հորդանանու մարգարեի կերպա-
ռո: Երկու լուսավոր հեմքեր, մեղքի երկու
հաշանավոր հակառակորդներ: Բայց ինչ-
քան տարքեր են նրանք իրենց խորրով:
Խոտակցաց ու խատկենցաղ մարգարեն
միայն անձք ու լուսանք ունի բոլոր մեղա-
վորների ու մեղանչողների համար, որոնց
սպառնում է պատժի ու պատուհանների
վրիժառությամբ:

—Եվ վայ ձեզի, դուք մողեզի և իմերու
Պիղծ ծընունեներ,
Զեր կեղծիքին մեջ մոշտակած
Մեղքերը ձեր մետաքահյուս:
Ան որ կուգա,
Սոնե պիտի լեզուն բերնեն
Զեր բոլորին,
Ինչպես փրտած մըսի կտոր
Զայն նետելու գաղաններուն:

—Թոյ անիծվին ու քար դաման,
Արգանդները պիղծ կիներուն:

Հովհաննես մարգարեն շարիքի համուկայ
իր անհաջու ատելության մեջ զայրազնամ՝
շիասկացավ, ավա ո, որ շարիքը շարիքով
չի վերանում: Վախի ու սարսափի սպա-
նալիքները խաղաղության ու հաշտության
երաշխիքներ չեն երբեք, այլ միայն ընդար-
մացնում են հոգին ու խիճն՝ աղասերում:
Ուստի Հովհաննեսի խոսքերը, որ խիստ
էին (բայց ոչ չար), չկարողացան արմատ
գցել Սալունի սրտում, այլ, ընդհակառակը,
վիրավորեցին նրան, գրգուեցին ու հեռաց-
րին իրենից: Ահա թե ինչո՞ւ Սալունն իր
և իր մոր նկատմամբ եղած անարդարի
դիմաց համակվում է ցասումով ու մտածում
միայն վրիժառու լինել: Վրեժ, որ մղաման-
ջային պատկերների հաճախանքով հայա-
ծում ու փոխորկում է նրա հոգին:

—Ակսեի մեջ արյունաները
Գլուխ մարդու
Գոց աշքերով:

Հաճախ շարիքը մեր մեջ, մեզանից ան-
կախ, մարդկանց ու շրջապատի ապիրա-
տությունից է ծնվում ու մեզ դարձնում մեր
զորի. Հիսուսի քաղցրությունն է պետք, ան-
հուն ներողամտությունը, որպեսզի Սազդա-
ղինեն փրկվի, մինչ Հովհաննեսը իր դաժան
ու սուր լեզվի խայթողներով ակամա կո-
ռուստյան է մատնում Սալունին: Ծիշու է,
վեն է հնչում մարգարեի խոսքի շեշտը, և
հուզիչ է մեղքի դիմաց նրա մաքրության ու
անարատության երազը: Բայց նա չկարո-
ղացավ բարձրանալ աստվածային ողորտ-
ներին, որ Հիսուսի սահմաններն էին: Նա
երեք չունեցավ ներումի ու ներողամտու-
թյան զգացումը, որ մարդու հանդեպ ան-
հուն սիրոց է բխում: Ահա թե ինչո՞ւ Հիսու-
սը յոթն անգամ յոթանասուն ներել էր պա-
հանջում փրկելու համար մեղավորներին:

Եվ վերջապես, ահա, «Սամարուին»
խոր ու թելադրական բանաստեղծությունը:
Աերպարն իր անմեղությամբ ու միամիտ գե-
ղեցկությամբ գալիս է ամրողացնելու իր
հախորդ ներուուիններին միննույն ճակա-
տագրականությամբ:

—Դուն քանի՞ անգամ,
Մարդոց սիրուն ի վար
Դույլ արձակեցիր, ով Սամարուին,
Եվ ամեն անգամ, ջորի փոխարեն,
Գրտար ափ մը տիղմ:

Եղիվարդի ներուուինները կրքերի, տեն-
չերի ու բուն իդերի կանայք են: Բայց և
նրանք իրենց մեջ կրում են որքան մարմնա-
կան սիրու ծարավը, նովնքան նրա մեղա-
վարտ վայելքներից փրկվելու երանավետ
տենչը, այսինքն՝ ներքին մեղանչականու-
թյան հակումները, միաժամանակ և նրանց
մաքրվելու ու ձերքագատվելու բաղձանք-

ները: Որպես մսի ու ոսկորի գոյակցություն հակամեն ենք մեղքի, սակայն նոյնընաև և ընդունակ՝ իրականացնելու աստվածային սրբակյաց կյանքի կոչումը երկրի վրա («Միանձնութին», «Նեղոսի լուսար»):

«Անոնք որ չեն մեռնին» վերնագրի տակ շարք կազմած բանաստեղծությունները բաղված են «Խորտակման գիշերներ» հատորից: Դրանք մեզ քերում են այլ մտահոգություններ դրսորող մի ուրիշ աշխարհի: Մարդկային նոգու նոր երեսներ ցուցադրելու ձգումով բանաստեղծը դիմում է այս անգամ պատմությանը, պատմական անցյալի դեմքերին, բայց միշտ ժամանակակից մարդու մի շարք կարևորագույն խնդիրներից թելադրված: Պատմական դեմքերի ու դեպքերի ուրիքագույն շրջանակից ներս բանաստեղծը վերիշուսում է մտահոգում մի նոր թեզան՝ նոր ապրումներ ու նոր խրճիդիրներ արծարծելու համար ժամանակակից մարդը հոգող հարցերի տեսանկյունից: «Ես ենիվան եմ այս գիշեր», «Ես Հոդան եմ այս գիշեր», «Ես Սողոմոնն եմ այս գիշեր», «Ես Արտավազն եմ այս գիշեր» ևն., որոնք ներկայացնում են իր հույսի ու հավատի, երազների ու պատրաճների մեջ կործանելով հավատենական մարդու ողբերգությունները:

Ուշագրավ են «Տեսիլներ տրտում օրենքն» բանաստեղծությունները և «Անցորդը» հատորից քաղված քերթվածաշարը:

Սուաշինները վերաբարում են բանաստեղծի կյանքի ձևախոր տարիների տիպությունները, հոգու դառնություններն ու հուսախարությունները: Բանաստեղծը, հիմարափակած կյանքից, մարդուց, ընկերությաց ու բարեկամից, երգում է անցյալի ուրախ օրերի ու ներկայի տրտմության ընդմեջ ալերախ հոգու տվյալանքները: Նշմարելի է սակայն, որ այդ վիճակները ոչինչ ունեն իրենց մեջ ընկնձված, ընդունակ և հուսահատ, որ նրանք արտահայտում են այս աշխարհի սուս ու անցագոր բաների տառապանքը, որոնց հարկանքով լի է եղել բանաստեղծի հոգին դեռ միջն երեխ, բայց և որոնցից դատարկված այսօր նա ողբում է նրանց ունայնությունը: Նշանակալից է, որ բանաստեղծը իր տրտմություններից մեկնում է դեպի կյանքի իմաստափորթյուն, դեպի աշխարհանանչում: Մյուս կողմից, սույն քերթվածների տողերի տակ բարձուում է իր սկզբունքին նվիրված մարդու անպարտելիության գաղափարը: Մարդը կարող է հաղթվել, որ ուրիշ բան է բոլորովին, բայց մարդը բարդացես չի պարտվում. այս է հաշնագրելի միտքը: Բանաստեղծի ներքին կորովը մի անընկնծի ուժ ունի, պարաբելու ու պարաբի մեջ թեկուզ զոհվելու մի համարձակ ու անտեղիտալի պատրաստա-

կամություն, որ նույնագես հաղթանակ է հշանակում:

— Տուր ինձի, ով Տեր, ուժ և քաջություն, Քայել անվարան, ինչպես ուստավոր, իր երազներու ճամբեն լուսավոր, Որուն փոլոյթը չէ վերքերն իր բոլոր:

Ես, վերջապես, «Անցորդը» դիվանից վերաբարակամ բանաստեղծություններն, ահա, գայիս են մեզ պատմելու հեղինակի անցած կյանքի, մանկության հիշատակների, հայրենին գյուղի ու գյուղական հուշերի սրտառությունները, ապրումները, զգայնությունները՝ անդարձ օրերի կարուտավոր ու սրտահուզ շնչով քնարերգված: Եղիվարդի քերթվածները որքան էլ անձնական մոտիվներ շշափեն, այս հատորում թե այլոր, միշտ էլ վերածվում են մարդկային համընդհանուր վշտի ու խոռվթի:

Այսպիսով.

— Եղիվարդն ավելի քան իր երեսնամյա գրական-քերթողական գործունեությամբ ու երա արդյունքներով մեզ ներկայանում է այսօր որպես սիրութքահայ բանաստեղծության այն մեծ ու կարկառուն դեմքերից մեկը, որի գործը բարեկաստարար չեղան, Օշականի բացարությամբ՝ «սկզբանական սրբազնա ավիշին տարտղնումը»: Թվում է, որ Եղիվարդն արդեն փարատել է Վարպետի մտավախությունը, որով նա անհնագիտ էր ան փորձառողջամբ, թե «տառապեր են քիչ մը ամեն ժամանակներու իրավ քերթողները, երբ ըսելն վերջ իրենց ըսելիքը, կիսամահին տակավին մանրել իրենք զիրենք և հատորներ շարել իրարու ետևեն»: Ես, ահավասիկ, ճշմարիտ ու արդար փաստն այն է այսօր, որ Եղիվարդը գրել է այն ժամանակ միայն, «երբ նոր աշխարհ մը զգացեր է իր գանկին տակ»:

Ես, հիրավի, մենք տեսնում ենք, որ Եղիվարդը գրեց գիրք քերում է մեզ նոր մտահոգումների մի նոր աշխարհի, հետաքրքրությունների մի նոր տիեզերք, խորի ու զգացման նոր ոլորտներ ու ոգեստեղծման նոր թոփշքների նոր հորիզոններ: Առանց մեկը մլուսին կրկնելու, նրա գործը, որպես միևնույն հոգու տարբեր էջեր, աստվածաշրջական ներշնչումներից մինչև հայրենասիրական, անձնական ու պարագայական ապրումները, հարազատ բխումն են մարդկային ներքին աշխարհի բարդ ու բազմապիսի վիճակների ու խորիդաքող տագնաապների:

— Արվե՞ստը:

Որպես առանձին բաղադրիչ տարր արվեստը գոյություն չունի ստեղծագործության հությունից անկախ: Արվեստն իմբն առան-

ծին տարագ չէ, այլ բնական մարմնառությունը ներքինից ծննդող վիճակների: Ինչպահ էլ ուզում եք, գեղեցիկ ու գոնազարդ հանդերձանքներ պատրաստեցք աշխարհ նկող երեխայի համար, եթե երեխան ինքը հաշմ է ու տիեզեղ, ոչինչ չի փոխվի: Նրա սոռող ու կայտառ տեսքը, շարժումների աշխատությունը, դեմքի պայծառությունն ու աշքերի քաղցրությունը, մի խոսքով՝ ո՞ղջ գեղեցկությունը, նրա եռությունն իսկ է, այդ եռության անկորնչելի ու անքածան մասը, որ բերում է իր հետո՝ չգիտես ծառանզականության ինչպիսի գաղտնի օրենքներից ստացած: Ուստի առանձինն չկա ձևի գեղեցկությունն: Գեղեցկությունն ինքը էռության հատկանիշ է: Այս իմաստով Եղիշվարդը արտաքին գեղեցկության մուահոգությունը չունի, և նա գրեթե անտարբեր է բառի, խոսքի, շափի ու հանգի այլապես կարևոր պահանջների հանդեպ: Արվեստի գեղեցկությունը Եղիշվարդի բանաստեղծություններում, ինչպես ամեն մի ճշմարիտ ու իրավանաստեղծի մոտ, արտահայտվում է ներքինի արտաքիմամբ, հոգեկան պատկերների արտացոլմամբ, մի բան, որ ներքինի ու արտաքինի միության, միասնության անզեկի դաշնությունն է կազմում:

Բանաստեղծը:

Առա արսեղ է Եղիշվարդը անվերապահորեն արժանի մեր սերների գնահատանքին և անսակարեկելի համակրանքին: Ոչ միայն որովհետև նրա բանաստեղծությունները բերում են ձևի նորություն, պատկերների թեկարդական ուժգնություն և ինքնատիպ ոճի գեղեցկություն: Ոչ միայն որովհետև նրա «արտահայտությունը բարմ, գումեղ, կշռանույշ, ըրած է իր առաջին իսկ գրքով մեծ հվաճումներ» (Օշական), այլև գերազանցապես իր հոգածիսարի խորքով, իր զգալու և ապրելու եղանակներով, իր զգայնությամբ: Դժվար է բանաստեղծությունը սահմանել առարկայորեն հասկանալի մի տարագի մեջ: Ի՞նչ է այն հեղանյութը, որ բառերի ներքին ուղիներից գալիս ու հոսում է մեր մեջ, լցնում մեր ջիղերն ու զգայարանքները ու մեզ առնում իր հմայքի տակ: Ակամա օրորվում են, տարութերվում ներքուստ հնչող մեղեղիներից գգլաված: Ամեն ինչ քո մեջ և քո շուրջը, երգ ու երաժշտու-

թյուն դարձած, երգում է անբարքատ: Ինչպահ էլ ուզենաս խոյս տալ նրանից, անկարգի է, նա քո մեջ է, քեզանից անբաժան, մեռապեսում է քեզ, հաղածում ու մերթ հիվանդացնում: Քո տիբության պահերին գալիս է թափանակություն շրջունքներիդ վրա, երբ անորոշ ու անանոն կարուտներ բռնանուն են հոգուդ, ու տրտմանուշ մի թափիծ պատում է հոգուդ ջինչ ու պայծառ երկինքը: Նա գալիս է որպես ներքին գաղտնականությունը կարուտների անվերձանելի բացատրություն:

Կարդացեք «Ես բնակիչ ամայքներու», «Պղտիկ տղա ուրք բռպիկ», «Դարձը» ու մանավան նրա երրորդ հատվածը և ասացեք, թե ինչո՞ւ տղերի ներքին ակոսներից հոսող հավերժական մրունչը անձանության սարսուի պես մտնում է մեր երակների մեջ, խառնվում մեր արյան կարկաչն ու գնում սրտի խորշերը՝ այսուղեւ հնչեցնելու անմասկագության համականությունը:

—Արյուն իշեր է ուոքերուս,
Ցուրտ է գիշերն այս անձայր,
Քանի տարի ուղեկորույս,
Հին տեղու ինձի եւս չե՞ս տար:

—Բայց սիրական, ցուրտ է, գիշեր,
Թնը կոտրած թոշունին,
Սչըերս լույսին չգոցված դեռ,
Ծոց մը տաքուկ ինձի տոր:

Տրտմանուշ այս շեշտը, այնքան բնական ու հարազատ, փոխանցվում է իրերին ու շրջապատին, բնույթանը, պահին ու նրանց ևս օծում իր ապրումների բանաստեղծականությամբ:

Դժվար է, հարկավ, սույն հոդվածի նեղ սահմաններում ներկայացնել Եղիշվարդի բանաստեղծական դիմանեկարը ու համարյա անկարգի՝ սպառել նրա մասին բոլոր ասվելիքները: Բայց, կարծում ենք, եկել է արդեն ժամանակը, երբ սիրութքահայ գրական-քննադատական մորքի լավագույն ներկայացուցիչներից մեկը կիսելամուի կանգ առնել Եղիշվարդի գրական ու բանաստեղծական վաստակի վրա ու մի գեղեցիկ հատորում գիտական ուսումնասիրության անկողմնակալ ոգով ու մեթոդով մեզ ներկայացնել նրա բանաստեղծությունները:

ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻԶՅԱՆ

